

Ո՛չ այն ես դու դարուք պարարտ , ոյր ժամանեցան շըրթունքն արձակ
 Ի Տըրդատայն ի Վրիզորի նախկին ոսկի արեւակ .
 Ո՛չ բարձանցդ արահետ՝ յանմահ ոգւոցն ոտից պատուեալ
 Կարօտելոցն ի տես մերոյ բաստին՝ եղեւ հիւրընկալ :

Ընկոյ յորժամ պատգամք քոց յոստանաց սաւառնէին .
 Կրբ ի ժամ այգորելի զարթունական ճաճանչ թագին
 Կեղակաց ամբոխ բանակք ողջունէին թունդ ի դըրնդիւն ,
 Ընդ հայեցի ծընընդոցդ ո՛չ զուարճացար յօրհնութիւնս :

Ընէ գողէք ցԼրասխ . ()ն ի վե՛հ ծոցոյն ուկիական
 Օւրիան հանցէ որ վաղ պարոյր զօրմովքն առին այրարատեան .
 Կոցին խոխոջք կարկաշասահ ըզծեր ամաց պատմելով խուն՝
 Փախիցէն տաքնապափոյթ , չեւ շաղախեալ յայս եղիութիւն :

Կողկողազին յարտօսը համակ ի քէն հայցեմ , Սասեանց սար ,
 Սի գուցէ անցաւորին հընչէ լեզու՝ գբեւ ի դադար .
 Ըստ առ սեմովք լերինդ երբեմն էր հայ անուն ազգ հոյակապ ,
 Որ ընդ ծանու ճըմէալ բեռամբ հըսկայիդ էջ յանդընդոց փապ :

Ճաղկալից՝ արդ թառամեալ աւուրց վըկայդ կաթողին ,
 Երբու՞մն ի քո տըւեալ գըլուխ , զերծ ըզքօղ՝ մեր փառաց երկինն : . . .
 Ըներկմիտ յարգանդ սիրոյդ նոր նըկարին երկունք գողտրիկ .
 Ո՛ղջ լեր վե՛հից վե՛հ , ցանկալիդ ձիւնապըսակ հայ Սասիք :

Հ . Գ . Ճ .

Աշակախօս Սերովբէն :

Ընկուզի ան մեծ ծառին տակ , որ
 Փ . . . ի ժողովրդապետական եկեղե-
 ցւոյն հրատարակը իր շուքովը կը ծած-
 կէ , տեսած կ'ըլլաս անշուշտ՝ կիրակի
 օրերը , երեկոյեան ժամէն վերջը մէկը
 նստած , որ գեղին տղաքը չորս գին ա-
 ռած հետերնին կը խօսի , որոնք ուշա-
 դրութեամբ և մեծարանքով մտիկ կը
 դնեն իրեն . առկայ մօտ յիսուն տա-
 ռուան մարդ մըն է , վարվուուն աչքերով
 և ուրախ զուարթ գեմքով . իր զգեստը
 որչափ որ անպաճոյճ է , բայց միանգա-
 մայն կօկ ու ձերմակեղէնները մաքուր
 երբև թէ լուացքէն նոր ելած ըլլան :
 Ան որ առ ծառը դնէր , կ'ըսէ տղայոց ,

Եստա աղէկ գիտէր որ ինչը պիտի չհարենայ
 վայելելուս ծառին ոչ պարտաւն և ոչ ալ շո-
 քը . Բայց ինչն իր աղաչը և անտնոյ դասիչ-
 ները մտածելով ըրաւ . առ Բանս , որ կիմս
 մէնք իրեն զնորհիտովը այսչափ պարուղ ունինք
 և արեւուն որտեմեանը որէմ պարսպարու-
 թիւն ճը : Ծեբերը մեղի կամար աշխարե-
 ցան , որեմն մէնք ալ մեղի ետեւ եկողներուն
 կամար աղէկութիւն ճը ընենք :

Վերջը կը սկըսին հարցընել իրեն .
 Մեղի պարմելու նոր Բան ճը չունին . իսկ ին-
 քը փոխանակ մէկուն մէկալին վրայ զրա-
 բանելու , և կամ տերութեան , կամ
 կանանց և կամ օդերուն վրայ գէշ խօ-
 սելու , կը պատասխանէ անոնց . Նոր
 Բան առ ունիմ , որ երբէկ վաճառանոցը եր-
 թալու տարեն տեսնելով որ կողմէնէրս պար-
 տած են որ որտեքս կը լըջնեն , սիլսայ Գան-

Քառիւ . Բայց խեղճ Մարտիրոսը պեանելով , որուն որդիքը հաշմ էն ու գաւազանով էր բալէ , յայնս բաշեցի և Աստուծոյ շնորհա-
 նալեղայ : Ըսով կ'ուզէր հասկըցնել իր
 ունկնդիրներուն , որ մեզմէ աւելի խեղ-
 ճերուն վրայ նայելով , մեր վիճակին
 գոհ պետք է ըլլանք :

Եւ կամ կ'ըսէր տղայոց . Տեսա՛ք հի-
 ճակոտան ըրած Թաթորիս . էկեղեցիէն է-
 լանս , մէկ մեծ շրջան ճը ըրինս և վերջապէս
 նոյն պեղը դարչանս . այսպէս ահա ամենայն
 Բարի կամ չար գործ հոն էր դառնայ ուսկից
 որ ճամբայ ելաւ :

(Ը)է որ կ'ուզես իմանալ թէ ո՞վ է աս
 մարդս , գիտցիր որ ասիկայ է Սերովբէ
 ըսուածը , որուն աս շրջականներս առա-
 նախօս մականունը դրած ենք . որովհե-
 տև բերանը միշտ նմանութիւն մը ու-
 նի , և ամէն տեսած բանէն բարոյական
 մտածութիւն ու խրատ մը կը հանէ .
 անանկ որ իրեն համար բոլոր բնութիւ-
 նը մէկ մեծ գիրք մըն է , ուսկից որ ին-
 քը կը կարգայ և ուրիշներուն ալ կար-
 դացընել կու տայ այնպիսի պատուեր-
 ներ՝ որոնցմով լաւ կարենանք ըլլալ , ու
 առաքինի և քաղաքակիրթ մարդու մը
 պէս կարենանք ապրիլ : () իննակի հա-
 մար կը տեսնէ գեղացի մը որ աշնան
 վարուցան կ'ընէ . Ահաաստիկ , կ'ըսէ ,
 ճարտարութեան պարիտը : Կրնայ ըլլալ որ
 ըսէ մէկ այդ հերիագործին . « Խեղեցիք
 էս , ո՞վ ճարտ Աստուծոյ , որ ցորենը արանի էր
 թճացընէս . ինչ գիտեր որ ալ աղէկ է յե-
 ոտնեցած ճնճողուհի , բան անպատին մը
 արարալը : Այդ ցորենով իրնաս հայ շինել-
 իսկ դաշտին մէջ ցանելով էնքա ճնճողու-
 ցիները կ'որոտեն , էնան ալ էր թճանայ սառ-
 ուցեն , Թայոսութեան , եղեամբն , արեւն
 ու հար-
 էրբէն : Բայց հերիագործը այդ վախճանին
 տէնը չէր տես , ճարտելով որ ո՞վ որ վախճան
 մէջ չէր տես , Բան ալ չէր տես : Յաստ-
 լ էր սերմանէ , որ ուրախութեամբ թողուէ :

Սերովբէ երբոր ցորենն աճեցաւ ու
 աստղացաւ , Սերովբէն հասկերը ցու-
 ցընելով որոնցմէ ոմանք շիտակ վեր բար-
 ձրացեր էին , ու ոմանք ալ գետին ծը-
 ուած էին , կ'ըսէ . Առջինները պարտաւ
 են , ու մէկտնայ լեցուն . ուրեմն արարալն էրե-

տաւնին պէտք է նայիլ : Նոյնպէս ճարտին
 մէջն ալ անոնք որ վերինին արհաճ էր
 բալէն , նշան է թէ զարմանալի էր որոշու-
 թեան պէր ճար-
 դիկ լին : Արդիւնքը ցածուն է : Ըսածին
 հաստատութեան համար օրինակ կը
 բերէր դատարկ տակառներն ու առանց
 բեռան կառքերը՝ որոնք աւելի ձայն կը
 հանեն : Եւ ցուցընելու համար թէ
 ինչպէս աղէկ բանը գլուխ հանելու հա-
 մար ժամանակ և աշխատութիւն պէտք
 է , ցորենը օրինակ կը բերէ՝ որուն հա-
 մար այնչափ հոգ ու խնամք պէտք է ,
 մինչդեռ վայրի խոտերն իրենք իրենցմէ
 կ'աճին ու կ'ունձանան : Եւստղը ցա-
 նողին , ու մտիկ ընողը հնձողին կը նը-
 մանցընէ :

Սերովբէ սովորեցընել ուզելով որ սերը
 սեր կը ծնանի , մեղըր օրինակ կը բերէ՝
 որ անոյշ ըլլալուն պատճառաւ ամէն-
 քը լզելով կ'ուտեն : Սերովբէ լերան մը
 ստորոտը գտնուած ատեն , հետեւանք
 կը հանէ թէ աշխարհքիս մէջ ա-
 մէն վերելք իրեն էջքն ալ ունի . մերթ-
 մարմնոյն շուքը ցըցունելով , կ'ըսէ . թէ
 որ մենք ետեւէն վազենք մեզմէ կը փախ-
 չի , թէ որ իրմէ փախչինք՝ ետեւէս
 կու գայ . այսպէս են նաև հաճոյքները .
 մերթ ձմեռուան կրակն ակնարկելով ,
 ով որ շատ կը մտենայ կ'այրի , կ'ըսէ ,
 բոլորովին հեռանալով կը սառի . նոյնը
 կը պատահի հարուստ և զօրաւոր մարդ-
 կանց հետ վարուելու ատեն : Եւ դար-
 ձեալ , ինչպէս կրակը իր չափին մէջ մնա-
 լով մեզի օգտակար ծառայութիւններ
 կ'ընէ , բայց չափէն դուրս ելլելով կ'այ-
 րէ ու մեծամեծ վնասներ կը պատճա-
 ուէ՝ ասանկ ալ նաև ստակը մեզի խիստ
 լաւ ծառայ է , բայց միանգամայն խիստ
 գէշ տէր :

(Ը)է որ ծուռ ու խորտուբորտ ծառ
 մը տեսնէ վրայ կը բերէ , թէ ատանկ
 չէր ըլլար եթէ ատենին շտկէին՝ քանի
 որ կակուղ ու դիւրաթեք էր . նոյնպէս
 մենք ալ քանի որ տղայ ենք պիտի ջա-
 նանք մեր թերութիւններն ուղղել :
 Յայտնի է որ եթէ մարդ մէկին մտ-
 տենայ՝ կարծես թէ մէկը կը փարատի
 ասկէ խրատ կը հանէ որ նոյնպէս ամե-

նայն դժուարութիւններ կը վերնան, եթէ մարդ արիութեամբ անոնցմէ չըփախչի: Ընտելութեան և բարի աւուան կը նմանցնէ ձիւնը, որ մէյնը ճերմկութիւնը կորսնցնելէն ետքը, նուրէն առջի սպիտակութեան չդառնար: Մարդու հաճոյիցը կը նմանցնէ օձաւին պղպղակները, որոնք որչափ ալ մեծ ու աչքի երևող ըլլան, բայց փշելուդ պէս մէկէն կը ցնդին: Եւամացոյցները կարծեաց կը նմանցնէ. վասն զի իւրաքանչիւր մարդ դժուարաւ իր կարծիքը ուրիշներուն կը համաձայնեցնէ, այլ ամէնքը իրենց գիտցածովը կը կառավարուին: Ընչպէս որ հրահանը՝ գայլախազին հետ զարնուելով կայծ կը հանէ, նոյնպէս մեր հանձարն ալ նեղը մտնալով դուրս կը ցատկէ. և դարձեալ ինչպէս մըրիկը օդը կը զովացնէ ու կը մաքրէ, նոյնպէս ձախորդութիւնք ալ մեր հոգին:

Ձախորդութեց վրայ գալով, խեղճ ու հիւանդոտ որբեարի կնկան մէկը իր որդւոցը վրայ նայելով կը հալէր ու կը մաշէր թէ ո՛վ զիրենք պիտի կերակրէ ու դարմանէ՝ երբ առանց ծնողաց մնան: Սերովբէն պատմեց իրեն. Օր մը մայրսնեբոս մէջ Բոյն մը պեսայ, ուր որ ճնշողով մը գետնի տնկեպար յափերուն վրայ նստած շէրէնք էր պարսպարէր. եկա ուրոքը և յափշտակեց զմայրը: Խեղճ յափերոյրէ ու անօթոթեանէ պիտի մեռնին: Երկրորդ օրը նոյն պէշը դարչայ և ուղեցի պեսնել յափերը. և ահա ուրիշ ճնշողով մը Բուրբելով իրենց իերակոր էր Բերէր: Աստուած որ հենդանեաց զիրար սիրել ու իրարու օգնել սորվեցուցեր է, միւս որդիդ ետեմ վրայ պիտի Բողո: Խեղճ որբեարի հիւանդը աս լսելով մխիթարուեցաւ:

Ետ անգամ իրեն հետ գետին եւերքը պտըտելու կ'ելլանք. ինքը գեղեցիկ նմանութիւններ կը հանէ անկէց: Սետը չկրնար աճիլ ու իր յատակն աւելի բարձրանալ առանց պղտուելու. նոյնը կը պատահի անոնց որոնք որ իրենց չափէն դուրս կ'ուզեն ելլել:

1 ՅՃ. Չափսփ:

(Ի)է որ գետը հանդարտ կը վազէ, ծաղկալից կ'ըլլան իր արուները. իսկ խորտուբորտ ու ամայի, եթէ մոնչաձայն ու փրփուրներ հանելով վազեն ջրերը. ասոր նման է նաև մեր կեանքն ալ: Որչափ որ նաւ մը արուներէն հեռանայ, այնչափ աւելի վտանգը կը շատնայ. նոյնը կը պատահի հարստութեանց նըկատմամբ: Սրին մէջ քար մը նետելով, ձևացած բոլորակները ցուցնելով, կ'ըսէ. Մարդուս մեծութեանցը նման են. սրչափ աւելի է նորարչակէն, այնչափ աւելի անբերութեանալով լրայ են: Սերջը ժայռերն ու խիճը ցուցնելով, կ'ըսէ. Սրած թշնամանքնիս աւազի վրայ գրելու ենք, իսկ ընդունած բարիքնիս ժայռի վրայ:

Սասնաւորապէս տղայոց հետ կեանակցելով կը զուարճանայ, որոնք այս առակներովս կը հրահանուէ: Ընչամ մը անտառի մը մէջ պտըտելու ատեննիս, տղայութեամբ ինկած շագանակները կը ժողվէինք. Սերովբէն Տեսէր, ըսաւ, իւրաքանչիւրը իջալից պարեան մը ունի, և չենք էրնար մէջէնը վայելել առանց յետաբերին ծախիւթելու: Այսպէս աշխարհիս վրայ վայելք մը չկայ որ իր գոտիքն ալ չունենայ. ճարտարութեանը հոն է որ շագանակը հանենք, վրայի պարեանը զգուշութեամբ խախտելով:

Սր յիշեմ, որ տղայութեանս ատեն, անգամ մը մայրս զիս հաւնոցը խաւրեց որ եղած հաւկիթները ժողուեմ. դուրս ելլելու ատեն դրան ուշ չգրի, և գլուխս ուժով մը դրան զարկի, անանկ որ խել մը օր զարնուածքին նշանը ձակտիս վրայ մնայ. Սերովբէն ըսաւ ինծի. Միտդ պահէ, որ աշխարհիս մէջ ըստ պէշոյն գիտնաս զիչ ունարհեցնել ու Բարձրացնել:

Սրիչ օր մ' ալ, ուզելով լայնկէկ փոսի մը վրայէն ցատքել, մէջն ինկայ: Ընքը զիս մէջէն հանելէն, վրաս չորցրնելէն ու մխիթարելէն ետքը, ըսաւ ինծի: Գնա սորվէ որ ուրիշ անգամ որտեւորդ համեմատ չայլտ առնես:

Սր զբայրս լեմնի տունկ մը պարգև ընդունեցաւ. և տեսնելով որ լեցուն

ծաղիկ ունէր փրցուց վրայէն, և փունջ մը շինելով ամենուն կը ցուցնէր և հոտուրտացնէր կու տար : Արքոր ամառը հասաւ, լեմնին վրայ բնաւ պտուղ չկար, ուստի սկսաւ գանգատիլ . ան աւտեն Սերովէն ըսաւ իրեն . Որքեակ է՞, ո՞վ որ է՞ ուղէ պտուղ բացել, պէտք չէ որ բուր ծաղիկները թողուի :

Արքոր զմեզ պատժելուն համար կը տոգոհայինք, Սերովէն բարի այգեգործը մեզի յիշեցնելով, կ'ըսէր . Եւե՛ Է՞ ուղէ առաջ խաղող ռանէնաւ, պէտք է որ վերադառնաք ու յօտէ որնը :

Արքոր դաշտերուն մէջ ծղրիտներուն ետեւէն կը վազէինք, ասկէ առիթ կ'առնէր մեզի ըսելու, որ իրենց պէս պէտք չէ ընենք, որոնք կամ կը ցատքեն կամ անշարժ կը կենան, այլ միակերպ ընթացքով առաջ երթանք . վասն զի կաղ մը իրեն կաղուծեամբը, երբ իր ճամբան առանց ընդհատելու միակերպ առաջ կը տանի, սուրհանդակէ մը աւելի առաջ կը հասնի իր տեղը, որ ճամբան կը կենայ կամ կը խտտորի : Հաւերը ցուցնելով կ'ըսէր . Տեսէ՛ք, կ'ախիլ ճը ջուր չեն խմեր առանց երկինք նայելու : Աւրիշ անգամներ ալ կ'ըսէր . կը պեսնէ՛ք այդ պայլը ցորենով բերանաւորուած . նայեցէ՛ք որչափ աշխատութիւն վաստակեցէ՛ք կոտայ գեղացոյն, և կ'երևայ կը պայլեւում զանոնք որոնք որ հաց չունին : Բայց լաւ դիտեցէ՛ք Լե՛ Է՞ ուղէ փոշի ամէն կողմանէ վեր կը բարձրանայ, որ կարծես Լե՛ Է՞ ուղէն զինքը խղրէ : Իսկ ինչը իր ճամբան առաջ կը քանի, և փոշին նորէն կը հանդարտի ու կը նստի : Այսպէս նաև այս աշխարհիս մէջ, ո՞վ որ բարի է՛ ընէ՛ իրեն դե՛մ հալածանքներ ու ջանքերուն առիթներ կ'ելլեն : Բայց ինչը իր ճամբան առաջ քանի, և իրենք իրենցէն կը դարձնեն : կ'ըսէր պապս . « Աղէ՛կ ըրէ, թե՛ զի կը զնասեն . լաւագոյն ըրէ, կը հանդարտին » :

Սկիւռ մը, որ առողջութիւնը չփնտրելու վախով չէր ուզէր բան մ'ընել, երկու բանալի ցրցուց . մէկը գեղեցիկ փայլուն, մէկալը սև ու ժանգոտած . Ան որ փայլուն է՛ ամէն օր կը գործածէ՛մ, ըսաւ, իսկ միայն պահած էի : Ահա ասանկ

դասարկութիւնը մեր զօրութիւնները կը մաշեցնէ, իսկ աշխատութիւնը կ'աւելցնէ և առոյգ կը պահէ :

Այն մարդիկներն, որոնք անկիրթ ու անքաղաքավար են, թէպէտ ըստ ինքեան բարի ըլլան, անլի ապուրի կը նմանցնեն, որ թէպէտ և սննդաբար ու անմխաս է, բայց ոչ ոք կ'ախորժի, և ոչ ոք կ'ուզէ . և կամ անանկ գրքի մը կը նմանցնեն որ մէջը գեղեցիկ բաներ բովանդակէ, բայց սխալագիր և գէշ կերպով գրուած ըլլալուն պատճառաւ, մէկու մը ախորժելի չըլլար : Այսանձոսները գեղնացաւոսներու՝ կը նմանցնեն, որոնց վարդն ալ գեղին կը տեսնուի : Անոնց՝ որ ուրիշներուն գործոցը վրայ իմաստակօրէն կը խօսին, կամ ուրիշին տանը բաներուն կը խառնուին, կը պատմէ . Ամէնք Յակոբին կողմէնորան վրայ կը խօսէին՝ մէկ կողմը աւելի լայն ըլլալուն պատճառաւ : Ինչը կը թողոր որ խօսին, և հատուցելով կ'ըսէր . « Խորաբանիւր որ ինչը գիտէ, Լե՛ Է՞ ուղէն ցաւ որ կողմնէ » . ու կ'աւելցնէր, Լե՛ ամէն մարդ աւելի լաւ կը տեսնէ իր քանի մէջ մէկ աչքով, քան երկուսով ուրիշին քան բաները :

Անոնց որ միշտ բերաննին ունին . Ո՛հ որչափ երջանիկ է՛ ըլլայի, Լե՛ որ այդ բանը կարենայի յետո՛ք յգէլ . — Երջանիկ ըլլալու ուրիշ բան ինձի չպահտի, Եւե՛ ոչ սա բանս . — Թէ որ այդ պաշտօնը յետո՛ք յգէ՛մ, ալ ուրիշ բանի չե՛մ փոխտի . Սերովէն մատուր լեռ մը ցուցնելով, կ'ըսէ . Ես ալ ասանկ կը կարծէի որ այդ վրանէն աւելի բարձր բան ճը չկայ, և Լե՛ անոր վրայէն մատուց երկինքն կընամ դալիլ : Ճանկութեւն ինչոսան ծայրը ելայ . Բայց ինչ . ան ապէն պեսայ որ չորս դին աւելի բարձրագոյն վրաներ կան եղեր, և Լե՛ երկինքը նոյնչափ հեռու է, որչափ դաշտին մէջ կենալով կը տեսնուէր : Ճիշտ այսպէս էն մեր հաճոյքներն ալ . որչափ աւելի բարձրանաս, այնչափ աւելի քու վիճակդ եւել բարձրագոյններ կը տեսնես, և որոնք նոյնպէս հեռու են Երջանութենէ :

Այս խնդրոյս նկատմամբ անգամ մը

մարդուս կեանքը հիւանդանոցի մը սրա-
հին նմանցուց , ուր հիւանդ մը իր ցա-
ւերէն տազնապեալ առանց քուն ու հան-
գիստ ունենալու , և քովը ուրիշ անկո-
ղիններ տեսնելով որոնք շիտակ ու նոր
շինուած են , միտքը կը դնէ որ եթէ
անոնց մէկուն մէջ փոխադրուելու ըլլայ
իրեն հանգիստը պիտի գտնէ . թէ որ
յաջողելու ըլլայ որ անոնց մէկուն մէջ
փոխադրուի , ան ալ պինդ կու գայ , և
կը սկսի անհանգիստ ըլլալ . վասն զի
թշուառութիւնը իրեն հետ կը կրէ :

Ուրեմն ո՞ր գոհ էրնանք ըլլալ հարցո-
ցինք իրեն :

Իսկ ինքը առանց պատասխան տա-
լու , մատը երկինք վերուց :

Կրնամ ինչուան վաղը քեզի բան պատ-
մել , բայց Սերովբէին ըսածը միտքս
կու գայ . Անի աղէի խաղ կարճ էր ունէ :

Կը շարունակուի :

Գայլ :

Ինչ կենդանի կայ որ այնչափ ատե-
լի ըլլայ ու մարդկանցմէ հալածուի՝ ինչ-
պէս է գայլը : Չորքոտանեաց մէջ գայ-
լը առաջին կարգի մասէրներէն է , կ'ը-
սէ Պիւֆոն , և թէպէտ 'ի բնէ իր
այս ախորժր լեցրնելու միջոցներն ունի ,
ինչպէս են զէնք , խարդախութիւն ,
արագաշարժութիւն , ուժ , և ինչ որ
իր որսը գտնելու , վրան յարձրկելու ,
յաղթելու , բռնելու և զիշատելու հար-
կաւոր է՝ այնու հանդերձ գրեթէ միշտ
սովէ կը մեռնի . վասն զի մարդս անդա-
դար հետը կուուելով զինքը անտառները
կը հալածէ . հոն գայլը զհարենալով իր
ուժովն և երազութեամբ իրմէ աւելի
զօրաւոր կենդանեաց յաղթել՝ կը ստի-
պուի միայն բաղդովին բան մը ձեռք
ձգել , և կամ երկայնմտութեամբ անոնց
ձամբուն վրայ դարանիլ , որ և այս իսկ
շատ անգամ չյաջողիր : Ի բնէ բիրտ ու
ծոյլ է , բայց հնարագէտ է երբ հարկը
կը ստիպէ , և կարօտութեան ժամա-
նակ յանդուգն է և քաջասիրտ : Ըն-
թութենէ բռնադատուած վտանգը

կ'արհամարհէ և մեր խնամած կենդա-
նիներուն վրայ կը յարձրկի , մնաւանդ
անոնց՝ որոնց դիւրաւ կրնայ յաղթել .
զոր օրինակ դառնուկներու , չնիկներու
և պզտիկ այծերու : Բայց այսպիսի աս-
պատակութիւններէ ու աւարառութի-
ններէ ետ չգառնար՝ ինչուան որ կամ
չվիրաւորուի և կամ յաղթուելով մարդ-
կանցմէ ու շներէն չհալածուի . ցորեկ-
ները փակուած կը կենայ , ու զիշերնե-
րը կ'ելլէ՝ ամբողջ գեղը կը պտրտի . տու-
ները կը կրծէ , դաշտի մէջ թողուած
կենդանիները կը յափշտակէ , փարախ-
ներու՝ հօտերու վրայ կը յարձրկի , և
դռներուն տակէն հողը փորելով ու պե-
ղելով՝ կատաղութեամբ ներս կը մտնէ ,
և առանց մասնաւոր որս մը ընտրելու՝
ինչ որ դիմացը ելլէ առ հասարակ կը
մեռցընէ : Իսկ երբ ասպատակութեամբ
չկրնար բան մը ձեռք ձգել՝ նորէն իր
անտառը կը քաշուի ու կը սկսի խուզար-
կութեան ելլել . կենդանեաց հետոցը
ետեւէն կ'երթայ ու կը հալածէ՝ յուսա-
լով որ դիմացէն ուրիշ գայլ մը զանոնք
բռնէ և աւարը մէջերնին բաժնեն :
Սերջապէս , երբ յետին աստիճան կա-
րօտութեան մէջ ինկած ըլլայ՝ ամէն
բան աչք կ'առնու . կանանց և տղայոց ,
և ինչուան երբեմն մարդկանց վրայ ալ
կը յարձրկի , և այսպէս մոլեալ և այսա-
հարած ժամանակ գրեթէ շատ անգամ
կը մեռնի :

Որչափ որ իրենց բնական կազմու-
թեամբը մեծաւ մասամբ շունն և գայ-
լը իրարու նման են՝ այնչափ ալ ընդհա-
կառակն թշնամի են և կ'ատեն մէկ-
զմէկ . կամ բոլորովին իրարմէ կը փախ-
չին , և կամ մահուցափ կը կուուին . թէ
որ գայլը յաղթէ՝ կը յօշոտէ իր որսն ու
կը զիշատէ . ընդհակառակն շունը պարզ
յաղթութեամբը գոհ ըլլալով՝ թշնա-
մւոյն դիակը կը թողու որ գան ագուա-
ներն և ուրիշ գայլերն ուտեն , վասն զի
գայլ զգայլ կ'ուտէ :

Ըրտաքին տեսքով և բնաւորութի-
քայլը շունէն ասով կը տարբերի որ գայ-
լին աչքերուն խուռչները խտտորնակի
և առ 'ի շեղ են , ակնակապիճը վար